**Լրացուցիչ համաձայնագիր թիվ 2**

31.01.2023թ.-ին կնքված թիվ PDU-84-01-23
Փոստային ծառայությունների մատուցման
պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

**ք.Երևան** **.07.2023թ.**

«ՀԱՅՓՈՍՏ» փակ բաժնետիրական ընկերությունը, որը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, գրանցված է և գտնվում է Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան 0002, Սարյան 22 հասցեում և հանդիսանում է Հայաստանի Հանրապետության փոստային կապի նշանակված ազգային օպերատոր (այսուհետ նաև՝ «Ընկերություն»)՝ ի դեմս Կոմերցիոն տնօրեն Գևորգ Չամյանի, մի կողմից, ով գործում է Ընկերության գլխավոր գործադիր տնօրենի՝ Լիազորություններ վերապահելու մասին 10.04.2023թ.-ի թիվ 979-Ա հրամանով, և Միգրացիոն ծառայությունը (այսուհետ նաև՝ «Հաճախորդ» կամ «Պատվիրատու»)՝ ի դեմս գլխավոր քարտուղար Համբարձում Աբրահամյանի, մյուս կողմից, (այսուհետ Ընկերությունը և Հաճախորդը միասին կհիշատակվեն որպես «Կողմեր») կնքեցին սույն լրացուցիչ համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

Ընկերությունը և Հաճախորդը համաձայնության են գալիս 31.01.2023թ.-ին կնքված թիվ PDU-84-01-23 Փոստային կապի ծառայությունների մատուցման պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Պայմանագրի 3.3 կետով սահմանվում է բառից հետո 832 400 (ութ հարյուր երեսուներկու հազար չորս հարյուր) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն բառերը փոխարինել 921 120 (ինը հարյուր քսանմեկ հազար հարյուր քսան) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ բառերով:
2. Սույն լրացուցիչ համաձայնագիրը հանդիսանում է 31.01.2023թ.-ին կնքված թիվ PDU-84-01-23 Փոստային կապի ծառայությունների մատուցման պայմանագրի անբաժանելի մասը:
3. Սույն լրացուցիչ համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից:
4. Սույն լրացուցիչ համաձայնագիրը կազմված է հայերեն, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 2 (երկու) օրինակից: Համաձայնագրի 1 (մեկ) օրինակը մնում է Ընկերության մոտ, իսկ 1 (մեկ) օրինակը տրվում է Հաճախորդին:
5. Կողմերի իրավաբանական հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

| **Ընկերություն՝** | **Պատվիրատու՝** |
|---|---|
| «Հայփոստ» ՓԲԸ | Միգրացիոն ծառայություն |
| ք.Երևան, 0002, Սարյան 22 | ք. Երևան Կ.Ուլնեցու 31 |
| ՀՎՀՀ՝ 02507464 | ՀՎՀՀ՝ 00259325 |
| «Կոնվերս Բանկ» ՓԲԸ | ՀՀ ՖՆ գործառնական վարչություն |
| Հ/Հ՝ 1930003703156000 | ՀՀ՝ 900011500049 |
| Հեռ.՝ (010) 514-548 | Հեռ.՝ (060) 275-012, (060) 275-041 |

Կոմերցիոն տնօրեն՝

Գևորգ Չամյան------------------------------
/ստորագրություն/

Գլխավոր քարտուղար

Համբարձում Աբրահամյան-----------------------
/ստորագրություն/